

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Գլաձոր ունիվերսալ վարկային
կազմակերպություն» փակ բաժնետիրական
ընկերություն

31 դեկտեմբերի 2017թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն	8
Ծանոթագրություն 1	9

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

ՀՀ, ք.Երևան 0012

Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964

Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC

8/1 Vagharshyan Str.

0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964

F + 374 10 260 961

«Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված Ընկերության 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտի անցած ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին՝ համաձայն Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններ և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2018թ. մայիսի 25-ի մեր եզրակացությունում:

*Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկարագրի ղեկավարության
պատասխանատվությունը*

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտ անցած ամփոփ ֆինանսական հաշվետվությունների՝ ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքների համաձայն պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» ստանդարտին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա՝ արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին:

Գագիկ Գյուլբուդադյան
Տնօրեն



Արմեն Հովհաննիսյան
Առաջադրանքի պատասխանատու



25 մայիսի 2018թ.



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	508,660	500,023
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(85,620)	(75,931)
Զուտ տոկոսային եկամուտներ	423,040	424,092
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	2,234	801
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(574)	(324)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	1,660	477
Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտ	1,562	576
Այլ եկամուտներ	32,505	69,788
Արժեզրկման ծախս	(128,662)	(210,969)
Անձնակազմի գծով ծախսեր	(66,021)	(58,642)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(28,373)	(23,633)
Այլ ծախսեր	(21,081)	(39,327)
Շահույթ մինչև հարկումը	214,630	162,362
Շահութահարկի գծով ծախս	(42,851)	(40,223)
Տարվա շահույթ	171,779	122,139
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
<i>Հողվածներ, որոնք հեղադադրվում են վերադասակարգվում շահույթում կամ վնասում</i>		
Հիմնական միջոցների վերագնահատում	-	149,669
Չվերադասակարգվող հողվածներին վերաբերող շահութահարկ	-	(29,934)
<i>Զուտ օգուտ հողվածներից, որոնք հեղադադրվում են վերադասակարգվում շահույթում կամ վնասում</i>	-	119,735
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	171,779	241,874

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	237,559	273,360
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	2,893,220	2,539,284
Կանխավճարներ շահութահարկի գծով	-	6,514
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	293,701	317,845
Այլ ակտիվներ	2,396	29,712
Ընդամենը՝ ակտիվներ	3,426,876	3,166,715
Պարտավորություններ և սեփական կապիտալ		
Պարտավորություններ		
Փոխառություններ	1,239,985	1,161,258
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	19,867	-
Հետաձգված հարկային պարտավորություն	49,292	58,313
Այլ պարտավորություններ	25,960	27,151
Ընդամենը՝ պարտավորություններ	1,335,104	1,246,722
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	1,616,700	1,227,250
Գլխավոր պահուստ	67,814	60,878
Այլ պահուստներ	216,912	233,596
Զբաղիված շահույթ	190,346	398,269
Ընդամենը՝ սեփական կապիտալ	2,091,772	1,919,993
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ	3,426,876	3,166,715



Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Ընկերության գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից 2017թ. մայիսի 25-ին:

Գործադիր տնօրեն
Գլխավոր հաշվապահ

(Handwritten signatures in blue ink)

Գրիգորյան Սաթիկ
Գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստ	Զբաղյալած շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2016թ. հունվար 1-ի դրությամբ	1,227,250	47,198	129,878	273,793	1,678,119
Հատկացում պահուստին	-	13,680	-	(13,680)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	-	13,680	-	(13,680)	-
Տարվա շահույթ	-	-	-	122,139	122,139
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	149,669	-	149,669
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	(16,017)	16,017	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(29,934)	-	(29,934)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	103,718	138,156	241,874
Հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,227,250	60,878	233,596	398,269	1,919,993
Բաժնետիրական կապիտալի ավելացում	389,450	-	-	(389,450)	-
Հատկացում պահուստին	-	6,936	-	(6,936)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	389,450	6,936	-	(396,386)	-
Տարվա շահույթ	-	-	-	171,779	171,779
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	(16,684)	16,684	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(16,684)	188,463	171,779
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,616,700	67,814	216,912	190,346	2,091,772

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	472,342	438,932
Վճարված տոկոսներ	(129,781)	-
Ստացված միջնորդավճարներ	2,234	801
Վճարված միջնորդավճարներ	(1,272)	(324)
Ստացված տույժեր և տուգանքներ	34,419	55,763
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(62,738)	(53,685)
Այլ ակտիվների օտարումից մուտքեր	6,483	126,851
Դրամական զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(22,260)	(16,579)
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	299,427	551,759
<i>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>		
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	178,227
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(452,604)	(537,376)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	(153,177)	192,610
Վճարված շահութահարկ	(25,506)	(76,269)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(178,683)	116,341
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(4,194)	(15,244)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	1,000	-
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(3,194)	(15,244)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Փոխառությունների ստացում	145,332	145,458
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	145,332	145,458
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում/(նվազում)	(36,545)	246,555
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	273,360	26,483
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	744	322
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	237,559	273,360

Ծանոթագրություն 1

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են «Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը՝ քաղված «Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից, պատրաստված են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը՝ կից ծանոթագրություններով, հասանելի է «Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրոնային հասցեում: